# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԿԱՔԱՎԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Կաքավաձոր համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Կաքավաձոր, /098/540120, kaqavadzor.aragatsotn@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ՄԱՐՏԻ 2019թվականի N 18

## ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 18) և 19) ենթակետի պահանջներով և հիմք ընդունելով <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> ՀՀ օրենքի 3-րդ գլխի, 14-րդ հոդվածով, և ըստ աղբահանության կազմված նախահաշվի, Կաքավաձոր համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1.Աղբահանության վճարը սահմանել՝

- կենցաղային աղբի համար՝
  ա. ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և /կամ/ բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 100 դրամ:
- ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝
  ա. ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար '2500 դրամ, կամ
  բ. ըստ զանգվածի 1 տոննա աղբի համար՝ 5000 դրամ:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱԿ

ՄԻՆԱՍՅԱՆ ԱՎԵՏԻՍ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՎԱՂԱՐՇԱԿ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱՅԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Հավելված1
ՀՀ Արագածոտն մարզի Կաքավաձոր
գյուղական համայնքի ավագանու
«04» մարտի 2019 թվականի N18
որոշման

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1 | Ուղերթ | Մեկ ուղերթի վազքը՝ 70կմ | Ուղերթի թիվը՝ 2 | Ընդամենը՝ 140կմ |
| 2 | Աշխատողներ | Աշխատողների թիվը՝ 1 | Մեկ աշխատողի աշխատավարձը՝ 80000 | 80000 ՀՀ դրամ |
| Ընդամենը | | | | 80000 ՀՀ դրամ |

Համայնքի ղեկավար՝ Հ. Բաղդասարյան